ՀՍԿԱՆԵՐ.– (Գլուխները հանում են եւ հետաքրքիր նայում են փոշա հատիկին։)

ՆԱԶԱՐ.– Էս է՝ էս հսկաների գլուխն էլ կտրեմ ու պրծնեմ։

ՀՍԿԱՆԵՐԸ.– (Գլուխները պահում են։)

ԹԱՄԱԴԱ.– (Գոռում է) Էյ, հսկաներ, ո՞ր ծակն էք մտել, հիմի՛ դուրս արիք, է՛։

ՆԱԶԱՐ.– Կամա՛ց, կփախչեն,

ԹԱՄԱԴԱ.– Վախում եմ. փախած լինեն։

ՎԱՐԺԱՊԵՏ.– Յաղթութի՛ւն, փախա՛ւ թշնամին, Հերոսակա՛ն յաղթութիւն։

ԹԱՄԱԴԱ.– (Զուռնաչիներին) Ապա մի զուռնա՛։

ԶՈՒՌՆԱՉԻՆԵՐ.– (Ածում են մի զուարթ եղանակ։)

ՆԱԶԱՐ.– (Վեր է թռչում տեղից եւ դրօշակը սազ անելով սկսում է երգախառն արտասանել)

Ձեռս գցէք, հում-հում ուտեմ դրանց ես,
Ոսկորները կրշըր-կրչըր ջարդոտեմ.
Ձեռս գցէք, փոշի շինեմ քամու պէս,
Երկինք հանեմ, հետքն ու փոշին կորցնեմ։
Էյ, որտե՞ղ էք, մեյդան արիք, հսկանե՛ր,
Գլուխներդ ֆռռացնեմ, գցեմ վեր։

ԲՈԼՈՐԸ.– Ա՛յ ջան, ա՛յ ջան, ա՛յ ջան։

ՆԱԶԱՐ.–

Քաջ Նազարն եմ, Նազարաշէն քաղաքից,
Ցեղս ազնիւ, ապուպապս թագաւոր.
Թռա, զարկի ինչպէս կայծակ երկնքից,
Կրակն ելաւ, բռնեց աշխարհք, սար ու ձոր,
Էյ, որտե՞ղ էք, մեյդան արիք, հսկանե՛ր,
Գլուխներդ ֆռռացնեմ, գցեմ վեր։

ԲՈԼՈՐԸ.– Ա՛յ ջան, ա՛յ ջան, ա՛յ ջան։

ՆԱԶԱՐ.– Գեադա, էդ հսկաներին բերէք, աղցան շինեմ դրանց, մի ճանկս գցէք դրանց ոսկորները, մի էսպէս կըչըտացնելով ջարդեմ, ջարդմըրթեմ, փշրտեմ, տամ քամուն, է՛։

ԹԱՄԱԴԱ.– Հակառակի պէս չեն էլ երեւում։

ՆԱԶԱՐ.– Էնքան գոռացիք, որ էլ հսկա կմնա։ (Սաքոյին) Հը՞, ի՞նչ խաբար։